Եվ այսպես բարեկամացած էր դևի հետ: Այնպես եղավ, որ Ապազին կալանեցին և կապանքներով ուղարկեցին Պարսկաստան: Քանի (Ապազը) այնտեղ էր, դևը գնում էր նրա մոտ, նրան տեղեկություններ էր տալիս նրա տնից և նրանից լուր էր բերում նրա տանը: Այնպես եղավ, որ նա վերադարձավ Պարսկաստանից և եկավ իր տունը: Նրա կինը հիվանդացավ, բերին Օհանավանքի սուրբ ուխտը: Աստծո շնորհներով բժշկվեց: (Կինը) գնաց, պատմեց իր ամուսնուն Սուրբ Կարապետի հրաշքները, այդ պատճառով Ապազը ծանոթացավ վանքին, գնալ-գալով բարեկամություն էր պահում: Իսկ մենք նրանից սովորեցինք հարցնելով: Նա մեզ ամենը ճշտությամբ պատմեց:

ԳԼՈՒԽ ԼԴ
ՆԱՋԱՖ ԽԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն նկարագրեցինք Լալաբեկի որդի Մահմադ խանի կալանումը և կապանքով Սպահան տանելը, իսկ շահը նրա փոխարեն Երևան ուղարկեց իր հարազատ ծառաներից Նաջաֆ անունով մեկին: Սա եկավ տիրեց Արարատյան այս երկրին մեծ ուժով: Քանզի Շահ Աբաս թագավորը սիրում էր նրան, իսկ սա խիստ խրոխտ ու չափազանց ահարկու էր իր զորքերի վրա: Սա գանգատագիր գրեց մեծամեծների վրա և ուղարկեց շահին, իսկ շահը գրեց նրան, թե ում գիտես, բռնիր ու կալանավորիր: Երբ այս հրամանը ստացավ, իսկույն զորք ուղարկեց և բռնելով մեծամեծներից տասնյոթ մարդ, կունդ դրեց նրանց պարանոցները և բանտարկեց: Նրանց բոլորի անունները չեմ իմանում, այլ գիտեմ միայն յոթի անունները, որոնք են հետևյալները. երեք եղբայր՝ Դալուանաբի, Դալու Զոհրաբ, Դալու-Սուլեյման, վերոհիշյալ Ապազը, Թելղահը, Էդիլը, Մուրադը և այլ տասը նույնպիսիք: Օրեր հետո նրանց ուղարկեց Պարսկաստան՝ այն քաղաքը, որ կոչվում է Մովբ: Սրանք մնացին այնտեղ, քանի Նաջաֆը Երևանում էր:

Այս Նաջաֆը բարեկամացավ Զաքարիա վարդապետին՝ վերջինիս պարսկերեն խոսելու պատճառով: (Այդ ժամանակ) Էջմիածնի կաթողիկոս էր մեր պատվական տեր Հակոբ Ջուղայեցին.

սրանք միասին գնում էին խանի մոտ և գալիս: Զաքարիա վարդապետը մեռավ հազար հարյուր ութ (1659) թվին: Խանը Օհանավանք և Սուրբ Էջմիածին (մարդ) ուղարկեց, որպեսզի մառանների և տների դռները կնքեն, մինչև որ գա կաթողիկոսը, քանի որ նա գնացել էր Գողթան գավառը: Ապա իմացրին նրան, թե իր կենդանության ժամանակ իր փոխարեն առաջնորդ է եղել, այնպես որ անտեր չի տունը: Ապա հրամայեց բանալ տան դռները, որոնք կնքեցինք: Այս խանը անարի և վախկոտ էր, քանզի ամառ ժամանակին սա գնում է Կոտայք գավառը՝ բազմաթիվ աղբյուրների ակունքները, որ կոչվում էին Ղըռխ-բուլաղ, որ նշանակում է քառասուն աղբյուր:

Այնտեղ գովեցին Քասաղ գետի ակունքները և Նիգ գավառի բարությունները: Հրամայեց իրեն բանակով այնտեղ տանել, որպեսզի ամառը այնտեղ անցկացնի: Այնտեղ մնացին որոշ օրեր: Եվ լսեց, որ Կարսում եղած օսմանցիները հավաքվել են, որ հանկարծակի հարձակվեն իր վրա: Երբ այս լսեց, հավատաց, որ այդ ճշմարիտ է, այդ պատճառով վախեցավ, հրամայեց, որ փախչեն, ուր կամենան: Իսկ ինքը հեծավ ձի ու փախավ Կարբի: Եվ շատերը թողին իրենց ամբարները, կարասիները, փախան խանի հետ: Իսկ խոհարարները կաթսան դրել էին կրակի վրա և կերակուր էին եփում խանի համար, երբ տեսան, թե խանը փախավ, նրանք թափեցին կիսեփ կերակուրը և կաթսաները առան, փախան:

Օսմանցիք լսելով այս՝ ծիծաղեցին և նրան կոչեցին փլավքոքյան խան (փլավ թափող), որ ասվում է մինչև այսօր:

Իսկ օսմանցիների հավաքման պատճառը այս էր, որովհետև նրանք լսեցին, թե խանը եկել է իրենց սահմանի մոտ, վախեցան թե կեղծ է այնտեղ նստել, միգուցե անակնկալ մի ժամի գա մեր երկիրը, ավարի: Նրանք այս կասկածն ունեին, իսկ սա նրանցից վախեցած փախավ ու դարձավ ծաղրուծանակի առարկա: Շահը լսեց, կամենում էր նրան պատժել, բայց խնայեց, որովհետև իր ծառան էր: Ասաց (շահը), թե Երևանը շատ մոտ է օսմանցիների երկրին, այդ պատճառով Նաջաֆ խանը վախեցավ, թե միգուցե օսմանցիք գերեն իրեն: Այժմ նրան կուղարկեմ երկրի մեջտեղը, որ օսմանցիները չկարողանան գերել նրան: Եվ հրամայեց նրան՝ ելնել Երևանից և գնալ Շամախի իր ունեցվածքով, և նա ելավ գնաց: